




ԱՐՁԱՔԱՄԱՆՈՒԹՅԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ


ԹԻԻ 82

15 ՓԵՏՐՈՒԱՐ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ





ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐԹԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹԱԹՆԵՐԹ

Երրորդ տարի 15 Փետրուար 1913 Թիւ 82

«Մերագոյն Բանաւայապէսն Պիոս Ժ. Կր մաղթէ որ Կաթողիկէ Անճապանց շաքաթաքերը շա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, յիշարար առաքելութիւն մը կա
սարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար,
Մերագոյն Հայրն արտաքին կ'օրհնէ յիշեալ Շաքաթաքերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարդ. Մէրի Տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս ԺԳ. Թեղեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ,
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտնամարտ:

Ք Ա Ր Ո Ջ ՅԻՍՈՒՍԻ ԶԱՐԶԱՐԱՆԱՅ ՎՐԱՅ

(Շար.)
Ա. Մ. Ա. Ս

Աստուած չէր ըլլար ո՛չ իմաստուն, ո՛չ
սուրբ, ո՛չ արդար, ո՛չ ալ բարի, կ'ըսէ Ս.
Օգոստինոս, եթէ մեղքին սնուցատիժ մնալը
կարելի ըլլար: Իր փառքը կը պահանջէ վը-
րէժ լուծել այն անարգանքին, զոր մեղաւորը
իրեն կը հասցնէ ապստամբութեամբ. իր ի-
մաստութիւնը կը պահանջէ վերստին հառ-
տասել այն կարգը, զոր մեղաւորը կը խան-
գարէ պարտազանցութեամբ. իր բարութիւնը
կը պահանջէ կասեցնել այն ոճիրները, որոնց
անպատուհաս մեղաւորը գոռ պիտի բանար
չար օրինակներով. իր սրբութիւնը կը պա-
հանջէ չհաղորդակցիլ արատաւորուած արա-

բածի մը, և զայն երեսէ ձգելով թշուառա-
ցնել. մէկ խօսքով իր բոլոր կատարելու-
թիւնները կը պահանջեն որ մեղքը պատ-
ժուի:

Բայց իր արդարութիւնը որ կը պահանջէ
մեղաւորին պատուհասուիլը, չի գտներ եր-
բէք, զայն հարուածելով, իրեն հատուցում
կամ գոհացում տալու կարող բան մը. այդ
զոհը իրեն արժանի չէ. մարդը իրեն դէմ մե-
ղանչել կրցաւ, բայց մեղքը քաւել չկրցաւ.
որովհետեւ, կ'ըսէ Յոր. Խնչ Ե մարդը Աստու-
ծոյ բով: Ուստի մարդուն տեղ մեծագին զոհ
մը պէտք էր. քանի որ երկիրը չէր կրնար
տալ՝ Աստուծոյ բարկութիւնը իջեցնելու,
զԱստուած մարդուն հետ հաշտեցնելու կարող
մէկը, պէտք էր որ երկիրը խոնարհէր և
ծնանէր երկրի հաշտարար արդարը. պէտք
էր որ մարդուն ապստամբութեամբը Տ'յրոջ ե-
ղած անարգանքէն շատ աւելի անոր փառք

ու պատիւ տալու ձեռնհաս զոհ մը գար կե-
նար անոր շանթերուն և մեր ոճիրներուն
միջեւ և անոր արդարութեան մեզի դէմ
պատրաստած նետերուն ինք զինքը միայն ընէր
նշաւակ։ Այս է Աստուծոյ իմաստութեան և
բարութեան ծրագիրը այն մեծ պատարագին
մէջ, զոր իր Որդին կը մատուցանէ այսօր
ամէն մարդոց համար։

Եւ այս ճշմարտութիւնը լաւ ևս հասկը-
նալու համար, կը խնդրեմ, եղբայրնե՛ր, նը-
կատեցէ՛ք որ մեզքը երեք անկարգութիւն
կը պարունակէ. անկարգութիւն մտքի մէջ՝
մոլար գաղափարով, զոր մեղաւորը կ'ունե-
նայ արգելեալ գործին նկատմամբ. անկար-
գութիւն սրտի մէջ, որ կ'ապստամբի օրէն-
քէն և չ'ուզեր այլ ևս Աստուծոյ հպատա-
կիլ. անկարգութիւն զգայարանաց մէջ որ
իրենց բնական կիրարկումէն դուրս կ'ելլեն
և իրենց հետեւէն կ'առնուն կը տանին բա-
նականութիւնը, որուն հետեւելու էին։ Արդ
Փրկիչը իր հոգեւարքի միջոցին կը քաւէ այ-
սօր այս երեք անկարգութիւնները՝ համեմա-
տական ցաւերով. նախ՝ իր Հօրը արդարու-
թիւնը կը ջննայ այսօր տանջելու իր միտ-
քը, հոն տալաւորելով մեղքին ամենասու-
կալի չարութիւնը. երկրորդ՝ խոնարհեցնելու
իր հոգին, համակելով զայն մեղաց բովանդակ
ամօթով. վերջապէս մատնելու իր մարմինը
յետին աստիճանի ուժասպառ վիճակի մը,
իրեն կանխաւ զգալ տալով մեղաց արդիւ-
նաւորած ամէն ցաւերը։ Պատմութեան
պարզ առաջարկումը՝ այս ճշմարտութեանց
ապացոյցները պիտի մատակարարէ մեզի.
նիւթը ինքնին, եղբայրնե՛ր, ըստ բաւականի
կը շահագրգռէ ձեր ուշադրութիւնը. ուստի
պէտք չունիմ ձեզմէ զայն խնդրելու։

Յիսուսի աշխարհէն իր Հօրը քով երթա-
լու ժամանակը եկած ըլլալով, նոր պատեքին
հաստատութեամբ՝ իրեններուն սիրոյ վերջին
նշանը տալէ, և այս երկնային կերակուրին
շնորհքով, և հօր մը ու ամենազուրթ Տիրոջ
մը վերջին ամենաարտաշարժ խօսքերով, զա-
նոնք իր չարչարանաց գայթակղութեան դէմ
զօրացնելէ յետոյ. գիտնալով իր զուլիւր գա-
լիքները, դուրս կ'ելլէ ահա՛ իր աշակերտ-

ներուն հետ նման զոհի մը որ ինքնին կը դի-
մէ հոն ուր զինքը պիտի զենուն։ Զիթին-
եաց պարտէզը կու գայ՝ վերջին անգամ Հօրը
հետ բանակցելու մարդոց փրկութեան մեծ
խորհուրդին վրայ. որովհետեւ իր աշակերտ-
ները զեռ ևս տկար էին, անոնց վրայ զը-
թալով չ'ուզեր որ ականատես ըլլան իր նը-
ւազմանց և հոգեւարքին. անոնցմէ կը բաժ-
նուի, գետին կ'իյնայ երեսի վրայ. և ըն-
դունելով Հօրը առջեւ իր ամենադաւան բա-
ժակը. Հա՛յր արդար, կ'ըսէ անոր, ահա՛
վերջապէս քու փառքիդ և իմ անարգանքիս
օրը. օրինաց զոհերն ու ողջակէզները քեզի
արժանի չէին. վերջապէս ինծի մարմին կազ-
մեցիր, որուն պատարագն ու տանջանքները
քու արդարութեանց գոհացում պիտի տան.
աշխարհ եկայ՝ լոկ քու սուրբ կամքդ կա-
տարելու. և մահուան վճիռը որ սկիզբէն ին-
ծի դէմ արձակած էիր, սրտիս ամենամեծ
փափաքն եղած է միշտ։

Այս կերպով երբ Յիսուսի ամենասուրբ
հոգին՝ մեր հաշտութեան արիւննոտ պաշտօնը
յանձն կ'առնու, իր Հօրը արդարութիւնը իս-
կոյն կը սկսի համարել զայն իբրեւ մեղա-
պարտ մարդ մը։ Այլ ևս զանիկայ չի նկա-
տեր իբրեւ իր ամենասիրելի և ամենահաճոյ
Որդին՝ այլ լոկ քաւութեան և բարկութեան
զենլի մը՝ աշխարհի բոլոր անօրէնութիւննե-
րով բեռնաւորեալ, զոր իր խիստ վրէժխն-
դութեան զոհելէ այլ ևս չի կրնար ետ կե-
նալ։ Եւ հո՛ս իր արդարութեան բովանդակ
ծանրութիւնը կը սկսի ճնշել այդ մաքուր և
անմեղ հոգին. հո՛ս Յիսուս իբրեւ ճշմարիտ
Յակոբ կը կոուի գիշերն ի բուն նոյն ինքն
Աստուծոյ բարկութեան դէմ, և կը լրացնէ
կանխաւ իր պատարագը. բայց շատ աւելի
չարատանջ եղանակաւ քան Գողգոթայի վը-
րայ. քանի որ հոս իր ամենասուրբ հոգին
պիտի աւանդէ, այսպէս ըսելու համար,
զայրացեալ Աստուծոյ մը արդարութեան հար-
ուածներով. մինչդեռ հոն լոկ մարդոց մոլեգ-
նութեամբ և զօրութեամբ։

Որովհետեւ նախ և առաջ Աստուծոյ ար-
դարութիւնը կը հարուածէ Յիսուսի հոգին՝
անոր մէջ տալաւորելով մեղքին ամենասու-

կալի չարութիւնը : Եւ իր հոգեվարքին այս առաջին պարագային լաւ եւ խելամուտ ըլլալու համար , եղբայրներ , կը խնդրեմ , նրկատի՛ առէք որ մենք առհասարակ՝ մեր մրտաց լոյսին նուազութենէն՝ մեղքին ո՛րքան սոսկալի ըլլալը նուազ կ'ըմբռնենք . բա՛րէ մեր հոգին՝ զգայարանաց մէջ իսպառ ընկըմած՝ գրեթէ միայն զգալի իրերէ կ'ազդուի . մարդիկ շատ քիչ կը զգան ահագնութիւնը մեղքին , որ հոգին կը սպաննէ եւ զայն յաւիտեան պէտքէն Աստուծոյ կը բաժնէ . մարդիկ կը սոսկան անոր համար պատրաստուած տանջանքներուն ահաւորութենէն եւ յաւիտեան կանութենէն . բայց ոչ երբէք՝ ամօթալի ու զղուելի հանգամանքէն այն օրինազանցութեան , որուն համար են այդ տանջանքները . ընդհակառակն կը համարին թէ պատիժը յանցանքէն մեծ է . եւ թէ Աստուած անանց տանջանքներով անցաւոր անհաւատարմութիւնները պատուհանելով չափազանց խոտութիւն կ'ընէ : Այսպէս կը նկատուի մեղքը , որ մեր հոգւոյն վրայէն կը ջնջէ մեր փրկութեան կնիքը , Աստուծոյ որդիութեան գրոշմը եւ նկարագիրը . եւ զմեզ անոր թշնամի կ'ընէ . կը նկատենք զայն իրրեւ սկարութիւն մը . բնութեան բերում մը , հասակի հետեւանք մը , խառնուածքի օրէնք մը . եւ որովհետեւ չենք ճանչնար ո՛չ յաւիտեանական ճշմարտութիւնը զոր մեղքը կ'անարգէ , ոչ արդարութիւնը զոր մեղի դէմ կը զինէ , ոչ կարգը զոր կը խանգարէ , ոչ սէրը զոր կը մարէ , ոչ սրբութիւնը զոր կ'անպատուէ , ոչ յաւիտեանական բարեքները զորս կը յափշտակէ , ոչ ալ բովանդակ ընդարձակութիւնը ահեղ չարիքներուն ուր գահավէժ գարահոս զմեզ կը կործանէ , այնչափ չենք վախճար անկէ , որովհետեւ չենք ճանչնար զայն :

Բայց Փրկչին ամենասուրբ հոգին , լի չնորհքով , ճշմարտութեամբ եւ լոյսով , ա՛հ , կը տեսնէ մեղքը անոր բովանդակ զղուելի , ահուկի հանգամանքներով . կը տեսնէ անոր անկարգութիւնը , անիրաւութիւնը , անջնջելի կեղտը . կը տեսնէ անոր ողբալի հետեւանքները , մահը , անէծքը , տգիտութիւնը , հրպարութիւնը , ապականութիւնը , բոլոր

կիրքերը , այդ դառնաղէտ աղբիւրէն ծնած եւ աշխարհի վրայ տարածուած : Այդ ցաւազին վայրկենին ամէն դարերու տեւողութիւնը կը պարզուի իր առջեւ Արէլի արիւնէն մինչեւ աշխարհիս վերջին օրը . կը տեսնէ աշխարհի վրայ անընդհատ շարք մը ոճիրներու . տիեզերքի այդ արհաւիրոտ պատմութիւնը կը պարզուի իր առջեւ . եւ անոր ամէն մէկ պարագան իր տխրութեան զաղտնածածուկ արհաւիրքը կ'առաւելու . հոն կը տեսնէ ամենէն հրէշային աւելորդապաշտութիւնները մարդոց մէջ հաստատուած . իր Հայրը մոռցուած , ամօթալի ոճիրներ աստուածութեան պատուին բարձրացած . շնութիւններ , ազգապղծութիւններ , վարչութիւններ տաճարներով , սեղաններով ճոխացած . ամբարշտութիւնն ու անկրօնութիւնը ամենէն չափաւոր եւ իմաստուն մարդոց բաժինն եղած : Եթէ դառնայ դէպի Քրիստոսեայ դարերը , հոն կը գտնէ իր Եկեղեցւոյն ապագայ աղէտները . հերձուածները , մոլորութիւնները , երկպառակութիւնները , որ պիտի կտոր կտոր ընէին անոր միութեան անգին խորհուրդը . անոր սեղաններուն պղծութիւնները , անոր սուրբ խորհուրդներուն անարժան կիրառութիւնը . անոր հաւատքին գրեթէ շիջումը , եւ հեթանոսութեան ապականակ բարքերուն իր աշակերտաց մէջ հաստատուիլն : Ահա՛ այս ամենասուրբ հոգւոյն առջեւ պարզուած տեսարանը :

(Շարունակելի)

ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՔԱՀԱՆԱՅ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՏԱԿ

Ը

ՂԱԼԱԹԻՅՅ “ՅԵԹՎԱԽԱՆԷ”

(Շար .)

Դատաւորը խիոյն գրեց եւ կնքեց դատաւճիորը , որ իրեն համար յաւիտեանական մահուան դատաւճիո էր , եւ զայն յանձնեց Պատրիարքին :

Սոյն այս դատավճիռը՝ պատմութեանս իբրեւ կարեւոր մասերէն մին, թարգմանաբար հոս կ'արձանագրենք:

«Պատճառ գրութեանս այն է թէ, կրօնաւոր Յովնանեան, որդի Դրիգորի, Պատրիարք Հայոց ի Մայրաքաղաքն ի Կ. Պոլիս եւ շրջակայից, այս մեծաւասիւ եւ պատկառելի ասեանիս առջեւ, ի ներկայութեան Կոմիսսար Բահանայի, որդւոյ Մարտիրոսի, որ մին է Մայրաքաղաքիս Սուրբ-Մանասրի Եկեղեցւոյ Բահանաներէն, եւ հայ աշխարհիկ անձիկներու, այսինքն Դրիգորի՝ որդւոյ ժամագործ Եղիայի, Պենկիի Գարաբեան՝ որդւոյ ոսկերից Խաչատուրի, ձիկերձի Բրիստփորի՝ որդւոյ Դրիգորի, դաս բացաւ եւ ըսաւ թէ վերոյիշեալ, այսինքն Կոմիսսար, Դրիգոր, եւ Գարաբեան, Հայոց ծէսը չեղով Յրանկիսց կրօնքը դաւանեցան եւ Յրանկիսց ծէսը գործարեցին, եւ նաեւ ուրիշ շատ մը մարդիկներ ալ հրապարակեցին, ու Հայ ազգին մէջ երկարատեւութեան հեղինակներ եղան: Եւ թէ վերոյիշեալ Բրիստփոր ձիկերձիկն ալ նմանապէս Հայոց կրօնքը չեղով, Յրանկիսց Հայերու հետ յարաբերութեան մէջ զրտնուած եւ մեր Եկեղեցին ընտելցեալով ան ալ Յրանկիսցաւ է: Արդ վերոյիշեալ Պատրիարքը ուզած ըլլալով որ վերը նշանակուած անձիկն հարցախնդրեան ենթարկուելով իրենց խոստովանութիւններն արձանագրուին. վերը յիշուածները, այսինքն Կոմիսսար Բահանան, Դրիգոր եւ Գարաբեանը հարցախնդրեան պահուն իրենց տուած պատասխաններէն ինչպէս որ տեսնուած է, վերոյիշեալ խնդիրը բոլորովին ուրացած են: Ապա կարգը Բրիստփոր ձիկերձիկին գալով, սա խոստովանած է երկու ամիսէ ի վեր Եկեղեցի չգալը՝ հոն, մի քանի քառերու հրապարակաւ արտասանուելուն պատճառաւ: (*) Բայց սա եւս

Յրանկիսց կրօնքը ընդունած ըլլալը ուրացած ըլլալով, վերոյիշեալ Պատրիարքն առ այս վկայներ խնդրուեցաւ որ իրեն ներկայացուցած դասին նկատմամբ բացատրութիւններ տան: Ուստի վկայութեան համար Բահանաներէն, եւ յիշեալ Սուրբ-Մանասրի քաղիկն աշխարհիկ մարդիկներէն իրենց կրօնքին համաձայն հետեւեալ բարի եւ հասարակ արժանի անձիկն ներկայացան. այսինքն Տէր Գալոյն որդի Աստուածատուրի. Տէր Սահակ որդի Յովնանեան. Տէր Աղեքսանդր որդի Դրիգորի. Տէր Աբրահամ որդի Միխայէլի, Տէր Յովն. որդի Պողոսի, Տէր Յովսէփ որդի Գալոյնի. Տէր Եսայի որդի Եփեսոսի եւ Աստուածատուր որդի Եարիմեան, Գալոյն որդի Սարգիսի. Արիստակէս որդի Արիստակէսի. Յովն. որդի Մանուկի Յովնանեան որդի Դրիգորի. Աստուածատուր որդի Մանուկի եւ ուրիշներ. եւ ասոնց վկայութիւնը այն եղաւ որ, յիշուի վերոյիշեալ Կոմիսսար, Դրիգոր եւ Գարաբեան Հայոց ծէսը չեղով Յրանկիսց կրօնքը ընդունած անոնց ծէսը գործարած եւ Հայ ազգին շատերը առ այն հրապարակած եւ խոտովեանց հեղինակներ եղած են. եւ թէ վերոյիշեալ Բրիստփոր ձիկերձիկն շարունակելով իր յանառութեան մէջ տալիս Եկեղեցի չի գալ եւ Հայոց կրօնքը չեղով Յրանկի եղողներու հետ յարաբերութեան մէջ կը գտնուի: Ասոնցմէ խաբանելու, ներկայ խնդրոյն նկատմամբ վկայ ըլլալը խոստովանած ըլլալով, իրենց վկայութիւնը՝ կանոնական ձեւակերպութիւններով առնուած եւ հաստատուած է, այսինքն հարցում եւ պատասխանները բառ առ բառ արձանագրուած են Ծաւարն ամսոյ ուրբաթի օրը 1119րդ ամի, (23 Հոկտեմբեր 1707):

Սոյն այս դատավճիռն ձեռքս անցած սաճկերէն օրինակը՝ այլեւայլ օրինակներու հետ բաղդատելով ըստ կարելւոյն

(*) — «Մի քանի բառերու» ըսուած խօսքերէն պէտք է հասկնալ այն նշանակութիւնը որ կ'արձանագրուէին եւ ցարդ կ'արձանագրուէին Հայոց Եկեղեցիներուն մէջ ընդդէմ Ս. Լեւոն Պապի եւ Բաղդեղոսի Ժողովոյն: Եւ Բրիստփոր ձիկերձիկն խոստովանութենէն կըրնանք եզրակացնել թէ նա սոյն ժամանակ հագնուելու ամուսնի ուղղափառ էր, եւ թէ այն աստիճանին ալ կաթողիկէայք չէին հաղորդակցեր յԱստուածաշին ընդ հերետիկոսս: Եւ Մարտիրոս Մեղիսեանի խօսքերուն համաձայն, այսինքն թէ նա

ինք անձամբ տեսած է թէ Հայ Եկեղեցիները կը մանային արարողութեանց ժամանակ Հայ ուղղափառք եւ Լատինք, ճիշդ այն ժամանակն էր երբ Մելքիսեդէկ Սուպհի Պատրիարք էր. որով հետեւ նա կաթողիկէ ըլլալով հրամայած էր իր իրաւասութեան ներքեւ եղող բոլոր Եկեղեցիներու՝ որ կաթողիկէ արարողութիւնը կատարեն, ինչպէս Բերայի Քարոլին Հարց եւ Ղալաթիոյ աթոմեան Ս. Բենեդիկտոս Եկեղեցւոյ յիշատակարանները կը վկայեն:

բնագործն համապատասխանող համարելով հոս տեղս արտատպելը պատշաճ դատեցի :

Աւպէսի թահրերի հուրուֆ օլ տուր քի .

Մահմէտի Իսթամպօլ վէ թէվապիինտէ Էրմէնի Բաթրիկի օլան Օհաննէս վէլէտի Գրիգոր նամ ըահիպ Մէճլիսի շէրի լազրմէթթէվրիտէ մահմէտի մէզպուրէտէ Սուլու-Մանասթըր Քիլիսէսի բարազ լարնտան Քոմիտաս վէլէտի Մարտիրոս նամ բարազ իլէ սահաթճի Գրիգոր վէլէտի Եղիա, վէ Գուլումճը Պէնի Արուսթիւն վէլէտի Խաչատուր . վէ ճիկերճի Քրիզոստոս (Աստուածաստուր) վէլէտի Գրիգոր նամ Էրմէնիլէր մուվաճէհէլէրինտէ թապիրի տափա Էտիպ մէրգուլման Բարազ Քոմիտաս, վէ Գրիգոր, վէ Արուսթիւն Մէզհէպի Էրմէնիտէն խուրուճ, վէ Տինի Էֆրէնճէ տուխուլ, վէ ալինի Էֆրէնճի իճրա, վէ Նիշէսիին տախի իզլալ, վէ Միլլէթի Էրմէնիլէր իթիլալէ պախս օլուպ, վէ մէրգուլմ ճիկերճի Քրիզոստոս տախի Տինի Էրմէնիտէն խուրուճ խուլապ, Էֆրէնճ օլան Էրմէնիլէր իլէ կէօրէշիլապ, վէ Քէնիսէյէ կէլմէմէք իլէ օլ տախի Էֆրէնճ օլմազլա, մէրգուլմանտան սիւալ օլունուլ թազրիլլէրի թահրի օլունմազ մաթթուպուլմ տըր տէտիքտէ, զըպպէսիւլալ մէրգուլման բարաս Քոմիտաս վէ Գրիգոր վէ Արուսթիւն ճէվապլէրինտէ խուսուսի մէզքիլլէրի պիլքիւլլէյէ միւնքիլ, վէ մէրգուլմ ճիկերճի Քրիզոստոս իսթիլմազ օլունտուգտա, Քէնիսէտէ պուլաճվալէ միւթապլիլզ պազը քէլիլմաթ օգունուր տէյուլ իքի ալ միգտարը Քէնիսէյէ վարմաաղընը իզլար . լաքին Տինի Էֆրէնճէ տուխուլլինի ինքեար իտէրէք . Բաթրիկի մէրգուլման պէր վէճի մուֆասալ միւստէաօին միւպէյիլիլ թալէպ օլունուլգտա, Տինիլէրինտէ ուսուլտէն օլուպ, սապըզ իւզլիքը Սուլու-Մանասթըր ըահիպլէրինտէն, վէ ճէմաթթըրտան բարաս Ագօր վէլէտի Ասլաուուր, վէ բարաս Սահակ վէլէտի Օվաննէս, վէ բարաս Ալիքսան վէլէտի Գրիգոր, վէ բարաս Արահամ վէլէտի Միքայէլ, վէ բարաս Օվաննէս վէլէտի Պօկօս, վէ բարաս Ուսէփ վէլէտի Ագօր վէ Խալի վէլէտի Շէօհ-րէթ, վէ Ասվատուր վէլէտի Եարիճան, վէ Օվաննէս վէլէտի Սէրգիս, վէ Խրիստաքէս վէլէտի Խրիստաքէս, վէ Օհան վէլէտի Մանուկ, վէ Օվաննէս վէլէտի Գրիգոր, վէ Ասլաուուր վէլէտի Մանուկ նամ Էրմէնիլէր վէ սաթիլլէրի լի Էճիլշէհատէ Մէճլիսի շէրիէ հազրուն օլուպ, Էսէր իլ իսթիլշէհատէ ֆիլ վազի մէրգուլման Քոմիտաս վէ Գրիգոր վէ Արուսթիւն Մէզհէպի Էրմէնիտէն խուրուճ, վէ Տինի Էֆրէնճէ տուխուլ վէ ալինի Էֆրէնճի իճրա, վէ Միլլէթի Էրմէնիտէն Նիշէսիին իզլալ, վէ իթիլալէ պախս օլմուշլար տըր . վէ մէրգուլմ ճիկերճի Քրիզոստոս տախի Քէնիսէյէ կէլմէյուլ Տինի Էրմէնիտէն Էֆրէնճ օլմազլար իլէ իւլֆէթ վէ սէօհպէթ իտէր . պիլզ պուլ խուսուսա պուլ վէճի իւզլէ շահիպլէրիլ շէհատէթ տախի իտէրիլ տէյուլ Տէր պիլլի Էտալի շէհատէթի շէրիլէ կէլտիքլէրինտէ զըպպէ ըիսյէթի շէրայիթ իւլ գապուլ շէ-

հատէթլէրի հաթի գապուլտէ վազը օլմազըն մա վազաա հըֆլէն իլմէգալ քէթպ օլունուլ ֆի եէվմէս սամին մին Շապան իւլ մուազգամ լի սէնէ թըսա աշէր վէ միլթ վէ էլֆ :

Ուստի յաղթական խուսթը այս բաղձացուած դատաւճիռը գրպանելով վերադարձան, բայց առաւօտէն աւելի ուրախ, զըւարթ իրենց տարած յաջողութեան վրայ և Երանելի Տէր Կոմիտասը իրենց ձեռք հոն յանձնեցին բանտի, և իրենք մաս մաս ցրուեցան գինետուններու մէջ արբենալու, աւետելով բարեկամաց՝ ըրած յաղթութիւննին և թէ այլեւս ապահով էին թէ հետեւեալ այսինքն ուրբաթ օր հանդիսատես պիտի ըլլային գլխատման իրենց որսին :

Իսկ Երանելի ծառայն Քրիստոսի յոգնած և տառապած, բանտի մէջ մտնելուն պէս ծունկի վրայ եկաւ և սկսաւ այսպէս աղօթել առ Աստուած . «Մ'վ սիրեցեալ Տէր իմ Յիսուս Քրիստոս, Դու եր իմ Աստուած ես եւ Փրկիչս, իմին յոյսս, զօրութիւնս եւ ապաւենս, Դու եր լիալուսն օրը կաթօք յանձն շառի յարաւանքը, եւ ինձ հաւար Խաչի վրայ մեռաւ, տուր ինձ զօրութիւն, եւ զիս արժանի ըրի՛, Բեզ կը պաղտախ, ընկեցու քու յարաւանքը քաժակը» . (Տեղեկ . Մազաք . Ճէվահ . Եղիազ . Անկիւր . Տ . Գրիգ . Եւզոկ . և Հ . Մատթ . Միլիթ .) : Ապա իր մօտ կանչեց Տէր Կարապետ Ճամճի Օղլու Քահանան իր խոստովանայրը, որ և նա կրօնքի խնդրոյն համար հոն բանտարկուած էր . մէկ կողմ քաշուելով իրեն խոստովանանք եղաւ, և ապա հաղորդուեցաւ : (*)

Գոհութեան աղօթքները վերջացնելէ յետոյ, իրեն հետ Ղալաթիոյ «Յէթ վախանէ»ի մէջ դատապարտուած Գրիգոր, Յարութիւն և Քրիստափոր ուղղափառներուն՝ որ մահառիթ վճռոյն արձակման կը սպասէին, քարոզել սկսաւ, և անոնց՝ երկնքի մէջ Մարտիրոսաց համար պատրաստուած փառքը բացատրեց ըսելով . «Մի՛ վախմաւ առժամանակեայ մահեմ, վասնզի տուրի երկիրը

(*) Պատմիչներէն ոմանք կ'ըսեն թէ կրցաւ նաև հաղորդուել :

անցողական կերպով գծեց պիտի փախցնե, բայց սարս անխիղապես Յիսուս Բրիսոս ւնե Տերը գծեց յաւիտեանական կենաց պիտի ընդունի եւ գծեց իւր յաւիտեանական ստեղծութեան մեջ անթառաւ պատկով պիտի փառաւորե:»

Հետեւեալ օրը որ Ուրբաթ էր, 24 Հոկտեմբեր, Յովհաննէս Պատրիարքը եւ իւր արքանեակները բազմաթիւ ամբոյս հետերնին Եպարքոսարան զիմեցին սպասելով Ատեանին բացման: Երբ Ատեանը բացուեցաւ, Ղալաթիոյ Մօլլայի ձեռքէն սղօրէն գնուած մահալճիօր յոսորտանօք մատուցին Եպարքոսին: Եպարքոսը առաւ թուղթը որմէ արդարոյ մը արեան ձայն կը հնչէր. ինչպէս նաեւ ընդունեցաւ իւր ներկայութեան զՏէր Կոմիտաս. եւ մինչ դատաստանը սակաւիկ ինչ առաջացած էր, եւ վճռոյն ընթերցման կարգը եկած, Եպարքոսն՝ Թագաւորէն աճապարանօք կոչուեցաւ. եւ նա լքեալ զգատաստան հապճեպ վազեց Արքունիքը ու ալ չվերադարձաւ: Ահա ասանկով դատաստանը յետաձգուեցաւ շաբաթ օրուան. եւ Տէր Կոմաս բանտի մէջ ժամանակ ունեցաւ հօգւոյն բոլոր կարողութեամբը մահուան, եւ Աստուծոյ ամենահաճելի Մարտիրոսական մահուան պատրաստուելու: Կը խոնարհէր Աստուծոյ մեծութեան առջեւ եւ ինք զինք անարժան կը գտնար այսպիսի մեծ զոհ մը, պատարագ մը մատուցանելու: Հաւատոյ վկաներուն համար երկնից արքայութեանը մէջ պատրաստուած այն փառաց պսակը, այն դպիւնին, աչացը առջեւ կենդանի գոյներով ներկարելով, ուրախութենէն նուաղիլ մը կուգար վրան. գոց գիտցած բոլոր ազօթքները անդադար կը կրկնէր. բայց այնպիսի զգացումով, այնպիսի հաւատքով՝ որ զինքը դիտող ընկերները կը զմայլէին եւ իր վրան ակնյայտնի կը տեսնային գերբնական շնորհաց նշոյլի փայլելը եւ տակաւին չկատարուած՝ մարտիրոսութեան վսեմ ցոլացումը: Այսպէս շարունակեց նա մինչեւ շաբաթ առաւօտը:

ԴԻՏՈՒՄՆԱԽՈՐ ԵՌԱՆԴ

Մեր բարեկամներէն մէկը անցեալ օր գիտեց թէ գրեթէ պարտականութիւն մը ունէինք պատասխանապիր մը գրելու՝ Մեմուաի մէջ Զարեհ Շիւմանեան ստորագրութեամբ երեւցած մէկ յօդուածի: Մենք թէեւ ուզեցինք զինքն հաճեցնել, սակայն եւ այնպէս բնաւ չենք հասկնար պատասխանելու անհրաժեշտ պարտք մը՝ արգելեալ թերթերու մէջ, անկրօն լրագիրներու մէջ շարունակարար եւ դիտու միաւոր կերպով հեղեղօրէն գրուող նախատինքներու, սխալներու մոլորութիւններու, հերետիկոսութիւններու. օր մը «Մէճմուա», միւս օր «Աղատամարտ» օր մը «Լուսարձակ» եւլն. տեսակ տեսակ ստորագրութիւններով հրապարակ կուգան եւ ուզածնին կը գրեն. զի... ազատ են. բայց մենք ո՛չ ժամանակ ո՛չ պարտք ունինք ամենուն պատասխանելու, մանաւանդ այնպիսեաց որ հեմարսութիւնը չեն փնտեր, այլ իրենց յամառ կարծիք կը ինկնեն եւ կամ Ս. Կրօնքը մանաւանդ Վաթողիկէութիւնը կը ճգնին տկարացնելու կամ անհետացնելու:

Եւ ի՞նչ է եղեր Շիւմանեան Զարեհ էֆ. ի այդ յօդուածին նիւթը: Գաղղիոյ Բերիկեօ քաղաքին Կրօնական շուքաբարեբքին (Semaine religieuse) մէջ գրեր է եղեր մէկը թէ Պապը Աստուած է: Նախ Եւրոպայի եւ Ամերիկայի քանիցս անգամ հարիւրաւոր Կաթողիկէ թեմերուն բոլոր շաբաթաթերթերը կարդալու, ուսումնասիրելու ի՞նչ պարտք կամ կարելիութիւն կրնայ ըլլալ Արձագանգի համար. անոնք իրենց Գատաւորներն ունին՝ անմիջական եւ գերազոյն, իմաստուն եւ անկողմնակալ, որոնց անոնք կը հնազանդիւն մըն ալ կատարուի, ինչպէս պիտի գիտնան: Արդ, քանի որ չենք հասկնար ի՞նչ դիտումով այդ պրութիւնը ուզեր է հանդիսաւորապէս ի վեր հանել Շիւմանեան էֆ., որ շատ ժլատ է ստորագրուած յօդուածներ զը-

րելու, մենք, գայթակղելիք միտքերը լուսաւորելու համար, ստիպուած ենք ըսելու՝ նախ, թէ՛ պէտք է ամբողջ գրութիւնը աչքի առջեւ ունենալ և ա՛յնպէս դատել՝ զբոլորին բուն խօսքերուն, պարբերութիւններուն, պարագաներուն և ամբողջութեան իմաստին վերահասու ըլլալով: Ապա կ'ըսենք թէ՛ մենք չենք կրնար բնաւ հաւատալ որ Կաթողիկէ թերթ մը այսպիսի նախադասութիւն մը գրած ըլլայ: անշուշտ հրէամիտ զրպարտութիւն մըն է այդ, ինչպէս շատ անգամ հրէական *Matin* թերթն կը յերիւրէ՛ անամօթարար, վարկաբեկելու համար Կաթողիկէ կրօնքը: Եւ մեծապէս իրաւունք ունինք այսպէս ըսելու, քանի որ նոյն յօդուածը սապէս կը սկսի. «Պապը Ասուած է» կը հաստատէ համարժէքօրէն Բէրիկէօյի Կրօնական շարաթաթերթ»ը: Տեսէ՛ք, ՀԱՄԱՐԺԷՔՐԹՐԷՆ 11, ուրեմն պարզապէս չէ ըսուած այդ նախադասութիւնը, այլ միւս ըսուածներէն կ'ը ՄԱԿԱՐԵՐԷ հրէական թերթը. ինչ անկեղծութիւն... գիտումնաւոր. որպիսի՛ անիրաւութիւն: Եւ Շիշմանեան էֆ. առանց խղճելու յիշեալ թերթին կը վերագրէ ուղղակի և կտրուկ կերպով գրած ըլլալ այդ նախադասութիւնը, և կ'ողորայ զայն արցունքներով... կոկորդիլոսի. և անհարկի և քաշքշուք մերձեցումներ կ'ընէ Հայ-Կաթողիկէ դատին. սրամաքանութեան, անկեղծութեան, ուղղամտութեան սպանութիւն: Վերջապէս ենթադրելով որ նոյն իսկ այդ խօսքը գրուած ըլլար, ինչպէս կ'ուզուի յա՛նիրաւի և ստութեամբ ներկայացնել, կ'ըսենք՝ թէ, այն իբրեւ անջատ նախադասութիւն, որպէս է (*uti jacet*), սխալ է: Արդ ուրեմն, ինչ հետեւութիւն աստի... Գրող մը՝ եթէ գրած ըլլար, սխալած պիտի ըլլար. ահա՛ այսչափ, և ոչ աւելի: Բայց ո՞վ ըսաւ թէ կրօնական շարաթաթերթ մը կամ անոր խմբագիր մը անսխալակամ է: Այդ սխալէն կամ ծայրայեղ չափազանցութեան ինչ իրաւամբ կամայականութիւն կ'ունեցուի ընդհանուր վրայ առարկելու: «Որ յոյժ ցուցանէ, ոչինչ ցուցանէ» (*Qui nimis probat nihil probat;— Qui prouve*

trop, ne prouve rien) կ'ըսէ Տրամաբանութիւնը: Այդ սխալը— եթէ գրուած է իրօք, զոր կը մերժենք իրաւամբ— բոլորովին անհասկան է, և այն՝ պատկանեալ իշխանութեան կողմանէ անպատճառ կ'ուղղուի: Այդ տեսակ սխալները քանի՛ցս գործուեցան, սուղ ինչ յառաջագոյն, նոյն իսկ ի Հայոց, Զրկուլահի, Խիլաֆէքքեմահի ևն. բառերուն շուրջ, Կարմիր Սուլթանը շողոքորթելու համար. սակայն Շիշմանեան էֆ. ան ատեն ըսաւ գիտողութիւն չէր ընել...

Իսկ վերի խօսքին— եթէ երբէք ըսուած ըլլար,— ձեւն ալ պախարակելով հանդերձ, այլ սակայն զանի իբրեւ անջատ նախադասութիւն չխորհելով, կ'ըսենք թէ ատոր իմաստը ո՛չ թէ բնութեամբ նոյնութիւն կը նշանակէ, քա՛ւ լիցի. և չկրնար գտնուիլ յիրաւի տիմար մը որ կարող ըլլայ զայս խորհիլ.— այլ կը նշանակէ միաւորումն՝ ընթերակացութեամբ և ներկայութեամբ, զոր Յիսուս խոստացաւ նոյն իսկ ամէն հաւատացեալ, որ զՔրիստոս զգեցած են (Գաղ. Գ. 27) և Տաճար են Հոգւոյն սրբոյ (Ա. Կոր. Գ. 16) և Ասուածեղէն բնութեանն հաղորդակից (Բ. Պետր. Ա. 4). և թէեւ ոչ ոք կըրնայ գիտնալ Տիրոջ միտքը, այլ մեք զմիսս Քրիստոսի ունիմք (Ա. Կոր. Բ. 16— Հմմ. Յովհ. Ժ. 23): Եւ Քրիստոս ըսած է իր Առաքելոց և Եպիսկոպոսաց համար, անոնց մէջ ի՞ր ԱնՁը ներկայ ցոյց տալով. Որ ձեզ յսէ ինձ յսէ, (Ղուկ. Ժ. 16): Իսկ Պետրոսի համար մասնաւորապէս ըսուած է. «Ես աղաչեցի վասն քո, զի մի՛ պակասեցիմ հաւատք քո... Դու հաստատեցես զեղբարս քո. (Ղուկ. ԻԲ. 32): Նոյնպէս Մարգարէներն չէին որ կը խօսէին, այլ Ասուած անոնց բերնով (Մտթ. Ա. 22— Եբր. Ա. 1, ևւ.) Այսպէս է ահա որ ամէն բարի Քրիստոնեայք զՔրիստոս կը նկատեն իրենց Եկեղեցական Պետին վրայ. հրամանն ու վարդապետութիւնը Քրիստոսի է. պատիւն ու փառքը Քրիստոսի է: Ամէն մարդ իշխանութեան պիտի հնազանդի՝ իբրեւ Աստուծոյ. նոյնպէս կանայք անգամ եւ ծառայք պիտի հրնազանդին իրենց էրկներուն եւ տէրերուն իր-

րել Աստուծոյ. (Հռ. ԺԴ. — Եփ. Ե. 22. — Կող. Գ. 22-23): Ահա այս իմաստով է որ հարիւրաւոր Ս. Հարք ժողովականք ի լուր վարդապետութեան Լեւոնի Քահանայապետի՝ գոչեցին. «Լեւոնի բերնով խօսեցաւ Պետրոս»: Ասոր համար է որ Եպսկ. ի համար և նոյնիսկ Քրիստոնէի համար ի հնուց ըսուած է՝ Միւս ալ Քրիստոս (alter Christus. — Տերտուղ.): Ասոր համար Պետրոս սապէս յանդիմանեց զԱնանիա որ կը ստէր Պետրոսի՝ «Ոչ սեցեալ մարդկան ալ Աստուծոյ» (Գործ. Ե. 4.). զի ինքը կը ներկայացնէր զԱստուած. և Առաք. եալք ըսին. «Հաճոյ թուեցաւ Հոգւոյն Սբոյ եւ մեզ» (Անդ. ԺԵ. 28): Եւ Քրիստոս ըսաւ. Հրէից, Ձնոսա Աստուծաւ ասե առ ուս բանն Աստուծոյ եղեւ. եւ չէ մարք եղծանել գրոյն (Յովհ. Ժ. 34-35. — Հմմ. Սղմ. Զա. 6.): Ահա՛ ինչո՞ւ համար կրնայ ըսուիլ թէ՛ երբ Ս. Քահանայապետը կը խօսի, Քրիստոս է որ կը խօսի. նոյնպէս՝ Պապը անարգուեցաւ, ուրեմն Քրիստոս անարգուեցաւ. դարձեալ՝ Պապը լացաւ, ուրեմն Քրիստոս լացաւ. ճիշդ այսպէս՝ Ս. Քահանայապետը բանադրեց և հերձուածող հոգակեց, ուրեմն Քրիստոս բանադրեց և հերձուածող հոգակեց, ալլովքն հանդերձ:

Արդ ասոնք այսպէս ըլլալով կ'արժէ հարցնել թէ Զարեհ էֆ. Շիշմանեանի գիտումն ի՞նչ եղած է՝ անկասկած հրեայ և անկրօն թերթի մը արտատպելով, Բէրլինէօյի կարեւորութենէ գրեթէ զուրկ մէկ թերթին սըլալին վրայ երեք սիւնակներ գրելու... Մենք կ'ըսենք թէ ատիկա դիտումնաւոր եւ ուանդ մըն է: Արդեօք այս ենթադրեալ չափազանցութիւնով կը դիտէ՞ արդեօք ցոյց տալ թէ աւելորդ է նաեւ ամեն անհրաժեշտ հպատակութիւն, յարգանք, վերաբերում և յարում առ Ս. Քահանայապետն, նկատելով զինքն անշուշտ Յաջորդ Ս. Պետրոսի, Փոխանորդ Քրիստոսի, միակ Գերագոյն Գլուխ, Հովիւ, Վարդապետ, անսխալ վճռատու, Իշխան ամեն Եկեղեցիներու և թեմերու վրայ ուղղակի և մէջ մի հաւատացեալի վրայ, միակ դատաւոր և Հայր Ս. Եկեղեցւոյ մէջ, Աստուածատուր իրաւասութեամբ: Ժողէֆ տը

Մէսթր, գերահռչակ մատենագիրը, անկասկածելի Փիլիսոփայն, անսէ՛ք ի՞նչ կ'ըսէ Ս. Պապին համար. «Եկեղեցական պատմութեան ուշադիր ընթերցումն ի յայտ կու գայ ընդհանուր զգացում մը Քահանայապետին Գլխաւորութեան»: և կը յաւելու աներկիւզ և վճռական. «Հոն կը զգացուի, եթէ հնար է այսպէս ըսել, հոն կը զգացուի չեմ գիտեր ինչ ԻՐԱՎԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ (présence réelle) Ծայրագոյն Քահանայապետին՝ Քրիստոնեայ աշխարհի ամեն կէտերուն վրայ: Նա ամեն ճեղ է, Նա ամեն բանի կ'ընկերանայ, Նա կը դիտէ ամեն բան, ինչպէս ամեն կողմանէ ակնկառոյց կը նային Իրեն» (Եղ. Պապին, Գլ. Ը.): Տեսէ՛ք, ո՛րքան յանդուգն, այնքան գեղեցիկ, ճիշդ և նկարագեղ ասացուած. ահա ի՞նչպէս կը վարէ Նա՝ Քրիստոսէ Պետրոսի յանձնուած և Պետրոսէն իրեն փոխանցուած ամենաբարձր նուիրապետական Պաշտօնը: Աս ալ գոնէ Բէրլինէօյի semaineը չէ. և քանի՞ իւրաւոր են այսպիսի զգոն և բարի հաւատացեալք: Պէտք է յիշուի թէ Առաքիներէն ի միջին կայանայ ըստ մեծանուն փիլիսոփայից: Եթէ վերոյիշեալ սխալը՝ չափազանցութիւն ըլլալուն համար, պախարակելի է, նոյնքան դատապարտելի է նաեւ ըսելը՝ թէ Հոռոմ մեզի ի՞նչ կը խառնուի, թէ՛ Վասիկանեան ժողովն առ մեզ չգօրեք, թէ՛ Ս. Պապը ուրիշներէն կը խաբուի երբ գերագոյն վճիռներ կու տայ, թէ՛ մենք անկախ Կաթողիկէ Եկեղեցի մը պէտք է ունենանք, ևլն. ևլն. ասոնք ալ չափազանցութեան միւս կողմն են, և հետեւաբար մոլորական:

Այդ եռասիւն յօդուածը՝ անհարկի ըլլալուն համար, դիտումնաւոր եւ ուանդ մըն է միայն, իր առաւելաբանութիւններով, ներքոյ-զծումներով, իր ծանուցումներով. որոց միոյն մէջ կ'ըսուի. «Քրիստոս երբեք իր խօսքը մասնաւորելով չուղղեց Պետրոսի, այլ բոլոր Առաքելոց. և ընաւ խորութիւն չէր դնէր»: Այս ապաժաման դիտողութիւնը եթէ «Յս ընդ ձեզ եմ» խօսքին համար է, աւելորդ են երբեք, բնաւ բառերը, որոնք Սիւսի են. քանզի Քրիստոս ուրիշ տաւ անգամներ

մասնաւորեց և ուղղեց խօսքը Պետրոսին, Գերագոյն իշխանութիւն տալով և կատարեալ խտրութիւն դնելով. (Մատ. ԺԶ. 17 և ըն. — Ղուկ. ԻԲ. 31. — Յովհ. ԻԱ. 15, և ըն. և ըն.) : Ի՞նչ ըսել է դարձեալ՝ «Յոյժ ցաւալի է որ... անմեղանչականութիւնը մարդիկ յանդգնին մարդու մը (Ս. Պապին) վերագրել... Ճշմարտութիւններ՝ այսօր խաղալիք դարձած» և ըն. : Միեւնոյն կերպով կը մերժենք և զայս՝ իբր անճշտութիւն, Matinի վայելող աստուածաբանի մը կողմանէ որ անունը չիդներ, արդիական աստուածաբաններէն պէտք է ըլլայ ան : Եւ եթէ նոյն իսկ ըսուած ըլլայ մէկէ մը այդ սխալն ալ, և այս իսկ մեծ յանդգնութիւն է՝ մարդու մը սխալը բեռնել ամբողջ Կաթողիկէութեան վրայ. ոչ-անկեղծ մարդու գործ է ատիկա. ատիկա կ'ընեն բողոքականք՝ ո՛չ այնչափ առ տգիտութեան, այլ յաւէտ առ դիտումնաւոր չարութեան, ձրի գրպարտելու և վարկաբեկելու համար : Ուրեմն այս գէշքը թնշու կ'իւրացնէ Շիշմանեան էֆ. : Այս է եղբր, Բէրիկէօյի մէկ մարդուն ձրիաբար ենթադրուած սխալն է եղբր որ անհրաժեշտ դարձուցեր է՝ ըստ Շիշմանեան էֆ.ի, «Ամէն Հայ-Կաթողիկէի համար համակալ, գիտնալ և լաւ թափանցել այս վեճերուն (!) բուն խորը, հոն տեսնելու համար չարիքը՝ իւր սոսկալի, ահաւոր, ծառացեալ, բայց կանոնաւոր զարգացման ընթացքին մէջ» : Ի՞նչ հետադարձութիւն և ո՛րքան անտրամաբանութիւն. բառեր եւ այլ ոչի՞նչ. Verba prae-tereaque nihil ! միայն թէ այդ բառերուն ներքեւ հեռաւոր դիտումը ծածկուած է. Բէրիկէօյի այդ չափազանց բայց յերկրուած սխալը ընդհանուր ցուցնելով, ՄԵՐ վէճերուն ալ զայն յարմարցնել. — բոլորովին յանգէպս և յանիրաւի. — Իսկ Սաքսոնիոյ Մաքս Իշխանին համար ըսել կարենալ թէ՛ «Մաքս Իշխան ետ չառաւ իւր ոչ մէկ գրածը», յիրաւի ապշահար կը թողու զմեզ. քանզի Մաքս Իշխան բացարձակապէս խոնարհեցաւ յոռո Ս. Քահանայապետին և ետ առաւ իր գրած ամեն սխալները, իր իսկ ձեռնագրով. եթէ Շիշմանեան էֆ.ի այդ ժխտումը տգի-

տութենէ յառաջ կուգայ, ինչո՞ւ այնքան վստահութեամբ կը հաստատէ բան մը զոր չգիտեր. իսկ եթէ առ տգիտութեան չէ, ի՞նչ է ուրեմն... Եւ այս առթիւ կ'ըսենք թէ բացարձակապէս աններելի է Շիշմանեան էֆէնտիի պէս Եւրոպա տեսած մարդուն գործածել՝ «Վոհմակի մը գոռում գոչում» ոճը. — Վոհմակ, . . . Վոհմակն ու՞ր է արդեօք...

Իսկ հիմա ի հակառակէն գիտել պիտի տամ սա ենթադրութիւնը թէ. ինչպէս որ Շիշմանեան էֆ. մեր հանրութեան մէջ առհասարակ անգիտացուած Բէրիկէօյի մը թերթին այսքան կարեւորութիւն տուեր է, այնպէս ալ եթէ երբէք հնար ըլլար աշխարհիս Կաթողիկէներուն՝ տեսնել և իմանալ որ զիւրենք նումարիս Կաթողիկէ անուանող Հայ խմբակ մը՝ թերթ մ'ունի Մեծմուա անուն, և կարենային կարգալ անոր այսչափ ատենէ ի վեր ժայթքած մրուրը!!! . . . Տէր Աստուած, ի՞նչ պիտի ըսէին. անշուշտ դէմքերնին ամօթով պիտի ծածկէր, և արդար նախանձախնդրութեամբ մը պիտի մերժէին այսպիսի Կաթողիկէները... Եւ կը մերժեն իսկ, քանի որ Եկեղեցւոյ Գերագոյն Գլուխը մերժած է : Աւելի լաւ չէ՞ր ըլլար ուրեմն Զ. էֆ. Շիշմանեանի համար՝ մտածել, — եթէ ճշմարիտ Կաթողիկեայ է, — թէ՛ հազար անգամ աւելի մեծ գալթակողութիւն և անպատուութիւն է աշխարհիս բոլոր Կաթողիկէից առջեւ ցուցադրել Հայ-Կաթողիկէ կոչուող խմբակ մը, որ Ս. Քահանայապետէն բանադրուած է և հերձուածող հռչակուած. և սակայն ամիսներէ ի վեր կ'ըմբոստանայ Քրիստոսի Փոխանորդին դէմ, և անյուր և ահաւոր սրբապղծութիւններ գործել կու տայ... Կաթողիկէի մը համար շատ աւելի ուղիղ, գովելի և այլուստ անհրաժեշտօրէն ստիպողական դարձած եռանդ մը պիտի ըլլար՝ զայս խորհիլ և... ղգաստանալ :

ԱԶԻԶԼԻՅԻՆ ՔԻՒՉԻՒՔ ՊԻՐ ԶԻՉԷՅԻ (*)

(Տեղում)

Ճագարթ պու տա Նէլլինին արգուսնա քիֆայէթ էթմէգաթի, վէ Ս, Հաղորդութիւնա թէչնէ օլան պու մասումճըղաղ, ինսան լարտան օնը ալմաղա միւլէֆֆազ օլմայընճա, արթըզ Ալլահտան էսթիրհամ էյլէմէյէ պաշլատը: Աճէպա պու գատար թէմիզ, պու գատար արգուլը օլան չօճուզ Ս. Հաղորդութիւն ալամազմըյոր: Լաքին արգուսնը մէվճուտ օլտուղը հէրոէ հաշ էհէմմըյէթէ ալլնամալըտը: Բրիսթիանլըղըն գատիմ օլան ուսուլլարընա իրթիճաէն օնունճը Պիոս Բաբա հաղբէթլէրի պունա պու սուրէթլէ գարար վէրմիշտիր:

Նիլլէնին հաշը տէօրթ օլմուշտը վէ սալահիյէթտար քիմնէլէրին ֆիքրինճէ Ս. Հաղորդութիւնը գապուլ իտէպիլմէք իչիւն իզթիզա էտէն ազըլ աշըղըղընա մալիք պուլունուեօրտը: Եպիսկոպոս տա միւռաատէ էյլէտի: Նէլլի պունը անլատըղընտա թարիֆ օլունմազ պիր մէսէրրէթլէ տօլտու, պու մէսէրրէթ քիսմիլէն սէմալի պիր մէսէրրէթ իտի: Բէնտիսիյէ պիլիսթիշարէ կիւն թանին օլունարազ, Յիւուսըն հիւրէյինէ սունուլմըջ օլան այըն պիրինճի ճումաաղընա թէսատիւֆ իտէն Դեկտեմբերին ճընա գարար վէրիլտի: Դեկտեմբեր պէշտէն ալթըյա ըըյաճաք օլան կիճէ պլէսպիւթիւն ույգուսըզ կէշտի: Հէր տազիզա իսսթէյէ պազան մայրապետի ույանսըրըր վէ Հաղորդութիւն ալաճաղը վազթը կէլմիշմիտի անէպա սօրարտը: Շաֆազ աթար աթմազ թէքրար մայրապետի ույանսըրարազ, Վալիտէ, Երլըղլար հէր կիթտիլէր, արթըզ չիմտի վազըթ տըր » տէր օնա:

Նէլլի պէյապար կիյինմիշ. պաշընտա կիւլլէրտէն հաըրմըջ պիր թաճ վէ իւզէրինտէ մուսինտէն պիր թիւլ իլէ մատուռա կէօթիւրիւլիւ: Բէնտիսինէ Հաղորդութիւնը վէրէն քահանայ տէր քի « Չօճուզ թամմ մանաըլլա քէնտի Ալլահընա սուսամըջ օլարազ Ս. Հաղորդութիւնը պէնիմ էլլէրիմտէն ալտը »: Պու տազիզատա օնուն սիմասը նու

րանի պիր բարլազըզա բարլար վէ օնուն իւզէրինէ ֆէվզէլատէ պիր նուր աօղար »: Կէրէք տինտարան վէ կէրէքսէ տինսիզլէր թարաֆիտան կէօրիւլէն վէ թատիզ օլունան պու մէնզարէ Նէլլինին կէօլէրէ տախիլ օլմազտան էվվէլ ալտըղը օթուզ իքի հաղորդութիւնլարը սրբասընտա չօք տէֆա միւշահէտէ շուսմուշտըր:

Զանն իտէրսինքի կէօլէր, օնունճը Պիոս Բաբանըն չօճուլար հազընտա վաղը օլան գարարընը պէր վէճհի քէշին օլարազ թատիզ իտիյօրլարտը:

Յէրալէր վէ ճէմիյիէթի պէշէրիյէ արասընտա Բրիստոսն թէքրար հիւքիւմիէրմա օլմասը խուստաղնտա պու գատար զայրէթ էյլէյէն պու Բաբատան, իշթէ չիմտի պիր միւսթէսնաիյէթ գապիլինաէն օլարազ Նէլլինին ազիզ թատիզ վէ իլան օլունմասը իսթիրհամ իտիլմէքտիթ: Բաբա Հաղբէթլէրինին սպահիյէթի մանտուտ տէյիլտիւր վէ պու վազաա տախի ֆէվզէլ տտէլէրտէն տիր, չիւնքի պու չօճուզ ազըլ աշըլմազտան էվվէլ ֆազիլէթ վէ իսպատէթ քիարըղըն հիւքսէք պիր տէրէճէսինէ վաաըլ օլմուշ պիր չօճուզ տըր: Մամաֆիյ սուրը օլապիլմէք իչիւն իպիիզա էտէն հէր տիւրլիւ ալամէթլէր տէքէնտիսինտէ մէվճուտ տըրլար:

Օնուն հիքեայէսինի հազան միւլէրրիի տէք քի, իլք հաղորդութիւնը ալտըղը կիւնտէն իթիպարէն տէօրթ պուշուզ սէնէ հաշաշան գատար կէշէն պիր գաշ այ գարֆինտա, օնուն իւզէրինտէ սալքի հէնի հէնի ֆազիլէթ չիչէքլէրի աշարլարտը: Չէքսիյի մատտի իզթիրապար արաղընտա կէօսթէրտիյի զահրամանանէ գուվվէթ վէ պէօյիւք սապը հէր քէսէ հայրէթպախշ օլուրտը: Աղըրլարը թէհամմիլ օլունմայաճազ տէրէճէյէ կէլինճէ հէր պիր էլինէ պիրէր իաշիւլութիւն ալըր վէ պէօլէճէ էլէմլէրինէ գարշը սուրուրտը: Զաթէն չօգտան պէրի օնուն միւքեալէմէլէրի արթըզ տիւնհատան գաթը ալէազա իթմիշլէրտի:

(Մապաւի վար)

(*) Տես թիւ 80, էջ 72:

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՏՕՆԱՅՈՅՑ

Փետրուար 16	† Կիր. գկ. Դ. Բառասն Անառակին
17	Բշ. դժ. ժն. or Մեծ Պահնգ
18	Դշ. դկ. ժգ. »
19	Դշ. աժ. ժե. »
20	Եշ. սկ. ժը. »
21	Ուրբ. քժ. ժք. »
22	Շք. րկ. ի. » — Եւ Յովնաննու

Երուսաղեմայ Հյրպսին.

Ս. ԿԻՒՐԵՂ ԵՒ ՄԱՅՐՆ՝ ԱՆՆԱ.— Այս եւանգելիս զոր տօնացոյցը կ'անուանէ միւս Կիւրեղ, էր Պաղեստինացի Հրեայ մը, Յուդա անուանուող, շատ բարի և օրինապահ իր կրօնքին մէջ և իբրեւ հնազանդ հրեա չակ հանած: Ըստ աւանդութեան, սերած էր Ս. Ստեփանոսի տոհմէն: Երբ Ս. Հեղինէ Դշխոյ՝ Կոստանդիանոսի մայրը, ի իւրեանցեամբ եկաւ Սուրբ Տեղերն ույցելելու, և ուզեց գտնել Կենաց Փայտը որմէ կախուած մեռաւ Քրիստոս, շատ հարցմամբ և խոշտանգեց ևս Հրեաները որպէսզի Խաչափայտին տեղը ցոյց տան, զոր ըրաւ Յուդա. և երբ գտնուեցաւ, յայտնուած հրաշխիքներէն շարժած, ինքն ալ դարձի եկաւ և երկրպագեց Քրիստոսի, և հրամանաւ Ս. Հեղինէի կոչուեցաւ Կիւրեղ և օծուեցաւ բաժանաչ և ապա Եպիսկոպոս՝ Պաղեստինոս թեմի մը վրայ և նշուտաւ նաեւ Երուսաղէմի Պատրիարքական Աթոռին վերայ Մակարիոսէի վերջը, կամ Ս. Կիւրեղ Երուսաղէմացւոյ աքսորանաց ժամանակամիջոցին, և իւր յորդառատ ուղղափառ վարդապետութեամբ կը անուցանէր իր հօտը: Երբ 36 ին Յուլիանոս Ուրացոյ Պաղեստինէն կ'անցնէր երթալու համար Պարսից հետ պատերազմելու, Հրեաներէն լսեց Ս. Կիւրեղի վրայոք և յատեան կոչեց զինքը որպէսզի ուրացնէ և մեծ գպթականութիւն աւթէ Քրիստոնեաներու: Իսկ Սուրբը Քրիստոսիւ զօրացած յաղթանակաւ պատասխանեց Ուրացոյին և ողբաց անոր կուրսութիւնը: Սրբութեամբ Յուլիանոս, հրամայեց որ աշխարհ մկրտութիւններ կատարած անոր աջ ձեռքը կտրեն. և Սուրբը կը խնդար՝ ըսելով. «Լաւ եւս է ինծի միանձնանի մտնել ի կեանս, քան երկու ձեռքով երթալ դժոխս»: Հրամանաւ բռնաւորին հալած կապար թափեցին անոր սրբանուէր մարմնոյն վրայ և լեցուցին բերին մէջ. և Սուրբը շարունակ գոչութիւն կը մատուցանէր Կենարար Փրկչին, յիշելով Անոր սուրբ Զարչաբանը: Կատեցաւ Ուրացոյը և երկաթի մահիճ մը հրաշէկ բորբոքեցնելով, երեսի վրայ պառկեցուց Սուրբը անոր վրայ, և գալար բերելով ձեռնէ տալով, վերքերուն վրայ աղ ցանել կու տար: Եւ տեսնելով որ

Սուրբը չէր գաղթի զԱստուած փառարանելէ, բանտ նետեց: Այս ամէն բան լսելով Սուրբին մայրն Աննա, եկաւ ուրախութեամբ և բանտին մէջ կը խրատուէր իր զաւակը: Յուլիանոս լսելով, առջեւ կոչեց և յորդորեց որ ուրանայ. և երբ աստուածասէր տիկինը հաստատութեամբ պատասխանեց, մազերէն կախել տալով կողերը քերել և պրել տուաւ. այս տանջանքը երեք ժամու չափ տեւեց և Աննա աղօթելով աւանդեց իր հոգին: Իսկ բռնաւորն զԿիւրեղ բերել տալով նորէն կը հրաւիրէր ուրացութեան. ան տան Սուրբը՝ ի նախանձու Տեառն, յանդիմանեց զինքը իր կամակոր չարութեան վրայ և գուշակեց իրեն թէ պիտի սպաննուի ի Պարսոս: Իսկ անօրէնը թովիչներ կոչելով, փոս մը լեցնել տուաւ թռչաւոր օձերով և Սուրբը նետեց անոր մէջ բայց բնաւ չփասեցին, որով վրայ թովիչներուն գլուխը Ագոն անուամբ, խոտովանեցաւ Տէր՝ զՔրիստոս. և անդէն սրով նահատակուեցաւ, արեան մկրտութեամբ: Երբ Սուրբը նետեցին եռացած կարաձիւթի սանի մը մէջ, հրաքով անոր մէջ ալ անփաս կ'աղօթէր: Յուսահատելով ամբարիշտն Յուլիանոս, հրամայեց գեղարգով խոցել. և այսպէս ընդունեցաւ Ս. Կիւրեղ Մարտիրոսութեան փառապանծ Պատկը:

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍՈՒ՝ ԳՐԲԷՆ

Գրեմ Ա.—Գլ. Գ.—ձոս... բոսքեան վարդապետութեանը վրայ:

(Շար.)

Ի՞նչ բան աւելի կ'արգելու գից ու կը արգահացնէ քան թէ քիչ արտի ըմբռնուած փափաքները: Բարի ու թերմուանը մարդը իր արտաբնական կոտորելի գործերը նախապէս ի ներմուտ կը կարգադրէ: Այդ գործերը զինքն չեն իշխու մոյի միտքեան բարձրանկարում. այլ նա կը նուանէ զանոնք ի կամու ուղիղ բանականութեան:

Ո՞վ ունի աւելի զօրաւոր կոխ՝ քան այն մարդը որ կ'աշխատի յաղթել ինքն իրեն:

Այս պէտք էր ըլլար մեր շարունակ զբաղմունքը, այս ինքն է՝ յաղթել մեր անկեան, եւ անկեան օր մեր անմիկ վրայ հզօրացոյն ըլլալ, եւ ի շարունակ միշտ յաւաքողիմն:

Անկեան կոտորելութիւն այս կենաց մէջ իրեն միացած ունի անկոտորելութիւն մը. եւ մեր անկեան կոտորելութիւն անպակաս ունի մատարման մը:

Անմիկ խնամքն անապառաժ ստուգադրել ճամբայ է առ Աստուած քան թէ գիտութեան խորունկ խորհրդութիւնը:

Պէտք է մեղադրել գիտութիւնը կամ ու կը իցի պարզ ծանօթութիւն իրաց, որ ըստ ինքեան շար է եւ Աստուծոյ կարգաւ. սակայն միշտ նախադասելի է քաղի խիղճ եւ առաքինի կեանք:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՅԱՍՏՈՒԱԾԱՅԻՆՍ

COLLECT. Հ. Ա. ԷՋ 99. ԹԻԻ 311

Հրահանգ Ս. Ժողովոյ Տար. Հաւատոյ 1729 (*)

(Շար.)

«Աստուծոյ միջոց հաստատուն եւ անփոփոխ եւ առաջի աջաց մնալով, եթէ յառաջիկային ծանր տարակուսանք մըն ալ տեղի ունենայ, պէտք է խորհուրդ հորցնել աստուածաբան վարդապետներու եւ այն գաւառաց մեջ երկար ժամանակ կենցաղավարող առաքելական քահանայներու»։ Իսկ ոմանք այդ խօսքերը այս սուրբ Ժողովոյ մտաց հակառակ խմբաւորով մեկնելով, յանդգնեցան, իրաւունք ունենալ կարծելով, ամէն դիպուածներու վրայ վճիռ արձակելու, և նոյն իսկ գրաւորապէս ընդհանուր կանոններ սահմանելու որոնք շատ վտանգաւոր են այսքան բազմակողմանի և կնճռոտ նիւթի մը մէջ, և այս պատճառաւ միտնաբերելու ջանքերն ալ ի դերեւ կ'ելլէին, ի վեր կը վատնուէին անոնց խորհուրդներն ու եռանդը, և անյարբր կարծիքներ այնչափ անգամ վճռուած մէկ խնդիրը ևս առաւել կնճռոտեցին, խիղճերու մեծ վնասովը և բարիներու գայթակղութեամբ և կորուստովը. ոյր վասն այս սուրբ Ժողովը պատշաճ դատեց վերոյիշեալ Հրահանգին դործադրութիւնը կրկին յիշեցնել և իւրաքանչիւր քարոզիչ քահանայի բացարձակապէս հրամայել որ անոր մէջ սահմանուած կանոններուն կատարելապէս համաձայնին և հնազանդին։

Ուստի Առաջնորդները, քարոզիչները և հոգ հոգւոց ունեցողները մեծ ուշադրութեամբ ջանան ուսուցանել հաւատացելոց և համոզել զանոնք զգուշանալու այն վտանգներէն որոնց մէջ կ'իյնան կամ ամբողջովին կամ մասամբ կանոնաւորապէս յաստուածային հաղորդակցելով Արեւելքի հերետիկոսաց և հերձուածողաց հետ, որոնք թէպէտ և ցարք խորհուրդներու էութիւնն ու զօրու-

թիւնը յաճախակի կը պահեն, սակայն թոյլ չեն տար որ Կաթողիկեայք իրենց պարտուց համաձայն արտաքուստ ևս ցոյց տան չհաւանութեան և անշատողութեան նշանները. որով կը պատահի որ միեւնոյն ծիսակատարութեան մէջ այդ համաձայնութիւնը և ծիսակատար սուտանուն պաշտօնէից մատուցուած յարգանքը չեն կրնար գայթակղութեան վտանգէն ազատել որ և իղցէ Կաթողիկէ մէկը, թէպէտ և ամենահաստատ ըլլայ այնպիսին հաւատքի մէջ, և անոնց պաշտամունքը եղծանող հերետիկոսական կամ հերձուածողական արարողութիւններէն խորշի։

Այս բանս աւելի կը հաստատուի նաեւ անկէ որ չարափառաց քով չի գտնուիր գրեթէ արարողութիւն մը որ ի մասին հաւատոյ մոլորութեամբ մը արատաւորուած չըլլայ. որովհետեւ անոնց եկեղեցիներուն մէջ կը գտնուի կամ նուիրում մը ի յիշատակ հերձուածողի մը զոր իբրեւ սուրբ կը յարգեն. կամ կը ցուցադրուին պատկերները կամ կը պաշտուին նշխարները կամ կը կատարուին տօնախմբութիւնները անոնց որոնք հերձուածի մէջ մեռած ըլլալով հանդերձ առհասարակ իբրեւ սուրբ կը համարուին. կամ վերջապէս յիշատակութիւնը կ'ըլլայ ի կեանս եղող հերձուածողներու և հերետիկոսներու, որոնք իբրեւ ուղղափառ հաւատոյ քահանայք գովարանուին, Ոյր վասն այն ամէն Կաթողիկեայք որոնք այս տուեալ պարագաներու տակ ներկայ կը գտնուին այս տեսակ ծիսի և ազօթքի և պաշտաման կատարման, չեն կրնար զերծ ըլլալ չար և կամակոր հաղորդակցութեան կամ գոնէ մեծապէս վնասարեք գայթակղութեան մեղքէն։ Եւ զիբնէք չարաքարացիներ սոսկ նիւթապէս ներկայ գտնուելու պատրուակը. որովհետեւ հերետիկոսներու կամ հերձուածողներու այս ծիսակատարութեանց ներկայ գտնուելովին իսկ ցոյց կու տան որ իրենք անոնց հետ կը համաձայնին ի միութեան ազօթից, ի միութեան պաշտաման, ի միութեան յարգանաց և մեծարանաց առ չարափառ պաշտօնեայս հերետիկոսութեան և հերձուածողութեան։

Այս բանս աւելի կը յատուկ անով ալ

(*) Տես թիւ 78, էջ 40-41.

որ Արեւելեայք, իրենք ալ ամէն օր աչքով կը տեսնեն, ականջով կը լսեն և բերնով կը խոստովանին որ հերձուածի մէջ յամառող աղանդաւոր մը բնաւ չի գար, ներկայ չի գտնուիր և չի մասնակցիր Կաթողիկէներու եկեղեցեաց մէջ կամ Պատարագ տեսնելու կամ Խորհուրդներ ընդունելու. այն պատճառաւ թէ՛ հաւատացելոց համախմբումը իբրեւ չար միաբանութիւն մը հայոյելով, այդ յարաբերութիւնը իբրեւ փնասկար և այդ ծիսակատարութիւնը՝ դատապարտելի կը համարին։ Ուստի երբ տեսնեն որ Կաթողիկէները անոնց եկեղեցիները կ'երթան, անոնց արարողութիւններուն ներկայ կը գտնուին, անոնց Խորհուրդներուն կը մասնակցին, միթէ պիտի չհամարէինք կամ վախճալու տեղի պիտի չունենայինք որ մի գուցէ ասով անոնք աւելի հաստատուին իրենց մոլորութեանց մէջ. և այս օրինակով ևս առաւել համոզուին թէ իրենք փրկութեան ուղիղ ճամբէն կը քալեն։ Ասկէ կը հետեւի որ շատ դժուարաւ կարելի է խուսափիլ նոյն իսկ հերձուածողաց և հերետիկոսաց փնասկար զայթակղութեան վտանգէն. և հետեւաբար Կաթողիկէի մը խիզճը չի կրնար ապահով ըլլալ եթէ անոնց հետ վերոյիշեալ եղանակաւ յարաբերուածայինս հազորդակցի։

(Շարունակելի)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԵՌԻՍՏԻՆԸ

Ռուսիոյ Հայ-Կաթողիկէներու ստուար մասը 1830 թուականին զաղթած է տաճկահայաստանի զանազան տեղերէն, զետեղուած ու հաստատուած է մեծաւ մասամբ Կովկասի Ախլցխա, Ախալքալակ, Ալեքսանդրապոլ, Լոռի, Բաթում և Արդուին քաղաքներու և նոյն գաւառներու մէջ. և փոքր մաս մ'ալ Ռուսիոյ այլ և այլ քաղաքները ցիր ու ցան կը գտնուին, որոնց բոլորին թիւն այսօր կը հասնի մօտաւորապէս վաթսուէն հազարի։ Զնայելով որ ասոնք չունէին սեպական ազգային կրօնական պետ մը մինչ

չեւ 1909ին, սակայն և այնպէս միշտ և ամէն պարագաներու մէջ անփոփոխ և անյեղլի պահած են իրենց կրօնական և ազգային սկզբունքներն և աւանդութիւնները ամէն ժամանակ սերտ սիրով յարելով Հռովմայ Ս. եկեղեցւոյն և անոր գերագոյն Գլխուն, Սրբազան Քահանայապետին՝ քաջ գիտնալով որ նա է ճշմարիտ փոխանորդ Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստ. ի և օրինաւոր յաջորդ Սրբոյն Պետրոսի Առաքելապետին։

Ռուսիոյ Հայ-Կաթողիկէ հասարակութիւնը որ երբեմն նոյն իսկ Ռուսիոյ մէջ՝ գրեթէ անորոշ տեղ մը կը բռնէր, յընթացս ժամանակի բռն ճշմարիտ ազգասիրութեան հոգին իրեն մէջ արթննալով և ուղղամիտ դատողութեամբ ըմբռնելով իւր կրօնքին սրբութիւնն ու բարձրութիւնը՝ նախանձախնդիր եռանդով անվեհեր հոգւով սկսաւ իւր Ս. Կրօնքին ամէն կէտերն խղճի մտօք յարգել, պատուել, մեծարել, արտաքուստ և ներքուստ պաշտել ինչ որ Ս. եկեղեցին կը հրամայէր իրեն. Հռովմայ Ս. Գահէն ըզխած և ելած ամէն վճիռ, ամէն հրաման, ամէն պատուէր նոյն իսկ ամէն խրատ՝ անթերի կատարելու պատրաստակամ կը գտնուէր և կը գտնուի ցարդ՝ առանց ու է քննադատութեան և մարդկային տկար դատողութեան տակ ձգելու։ Այլ՝ ի վեր քան զամենայն այս հասարակութիւնը Կովկասի մէջ միշտ փայլուն դիրք մը բռնած է իւր աննկնղ կրօնասիրութեամբը, մաքուր ազգասիրութեամբ առանց արատ մը բերելու կրօնքին, անկեղծ Աստուածապաշտութեամբ և ամէն տեսակ ջերմեռանդական պաշտամունքներ իւր եկեղեցիներու մէջ կատարելովը՝ բարի օրինակ հանդիսացած է այլոց, գործնականապէս ձգտած է և կը ձգտի ցոյց տալու այլադաւաններուն՝ թէ Կաթողիկէ եկեղեցին է ճշմարիտ եկեղեցի Քրիստոսի, անոր վարդապետութիւնն է անրիժ վարդապետութիւն Քրիստոսի. անոր ձայնն է քաջ և իմաստուն հովուապետին ձայնը, այս է Քրիստոսի, որ կ'ուզէ լսեցնել բովանդակ մարդկային ազգին։

Այդ ուղիղ անսայթաք ընթացքով ճշմարիտ եկեղեցւոյ հարազատ զաւակներ ըլ-

լաւնին ցոյց տուին Արբազան Քահանայապետներուն և իրենց հլու եւ հաւատարիմ հըպատակութեամբն, չահեցան Ռուսիոյ Վեհափառ Կայսերաց սրտերն՝ որոնց հզօր պաշտպանութեան ներքեւ օրինակելի հատարակութիւն մը հանդիսացան, հատարակութիւն մը՝ որ բուն բառին նշանակութեամբը կը բովանդակէ իւր մէջ կատարեալ մարդկութեան համար պահանջուած երկու գիտաւոր և էական կէտերը. ճշմարիտ կրօնասիրութիւն և ուղիղ ազգասիրութիւն. հասարակութիւն մը որ շատ լաւ ըմբռնած է թէ ազգային իրաւունքներէն ո՛րքան բարձր են կրօնքի սկզբունքները, և ասոնց հետեւելը որքա՛ն աւելի անհրաժեշտ է. հոգի՛ն է ազնիւ թէ մարմինը. մի՛տքն է մարդու ճշմարիտ ճամբէն առաջնորդողն թէ կոյր կամքն. ազգութիւնն է մարդս վերջին վախճանին՝ այս է փրկութեան նաւահանգիստն հասցնողն թէ Գրիգորիոսի ճշմարիտ կրօնքն։ Ահա այս ամէն ճշմարտութեանց խելամուտ եղող հատարակութիւն մը շուրջ 80 տարի կրօնական տեսակէտով Ս. Աթոռոյն և քաղաքական հանգամանքով տեղական իշխանութեան խիստ քննադատութեան բովէն անցնելով՝ այսօր ազատօրէն կը վայելին շատ տարիներէ ի վեր սպասուած առանձնաշնորհեալ նուիրապետութիւն մը՝ ընդ իշխանութեամբ գերապաժառ Սարգիս Մ. Վ. Տէր Աբրահամեանի Առաքելական Կառավարչի՝ ընտրեալ առ այդ պաշտօն և հաստատեալ Հռովմայ Ս. Պահէն և Ռուսիոյ Վեհափառ Կայսերէն։

(Շարունակելի)

ԳԱԹՕԼԻԻ ՄԷՉՀԷՊԻ ԷՍԱՍԼԱՐԸ

(Տեւամի)

Շու հալտէ, պու գատար միւհիմ պիր նոգթա հագգընտա հէր քէսին միւթթէֆիգ օլմասը, մութլագա պու նոգթանըն ալնի հագիգաթ օլտուղընա տէլալէթ իտէր. Հէմ տէ պու իթիգատը ումումի նէրէտէն իլէրի կէլէպիլիր։— Բունանի մեմուրլարսա՛ն մը։— Պիլաքիս, բուհանի մէմուրլար, քեանինլէր

վէ բարաղլար պիր Ալլահա տօղրու մէվճուտ օլան իթիգատըն նէթիճէլէրի տիրէր. չիւնքի, էյէր միլլէթլէր պիր Ալլահ վար օլտուղընա ինանմասալարտը, հիչ պիր քիմսէ օնուն խըտմէթինէ նէֆսինի վագֆ էթմէզտի վէ ճէմաաթլար տա մէզնէպլէրինին վէզայիֆինի իֆայա էլվէրիչլի մէմուրլար ինթիսապ իթմէզլէրտի։

— Ինսանըն ցեֆսի եմարէսինցէ՛ն մի (կիրք), հէվայի նէֆսանիսնտէն, չէհէվաթը նէֆսանիյէսինտէ՛ն մի։— Պուշլարըն քեաֆֆէսի տէ քէնտիլէրի պիհուզուր վէ մահքիւմ էյլէյէն պիր Ալլահըն մէվճուտիյէթինի ինքեարա սէվգ իտէն էսպապտան տըր։

— Պաթըլ գիւլմիքսէ՛ն մի։— Հիչ պիր պաթըլ գիւլմ հէր վագըթ, հէր եէրտէ վէ հէր քէս ինտինտէ նաֆիզ օլմագ, հէմտէ պիր պաթըլ իթիգատ, եա իլմ սայէսինտէ վէ եախօտ ազլը սալիմ տէլալէթիլէ էր եա կէճ զայիլ օլուր։

— Ճեհալէքսէ՛ն մի։— Էն պէօյիւք ալիմլէր, Ալլահըն վարլըղընա էն ճիտտի սուրէթտէ ինանտըզլարընը պիլ ֆիլի իսպաթ իթմիլլէրտիր։

— Գօրգուսա՛ն մը։— Վար օլմայան պիր շէյտէն, պիր քիմսէտէն հիչ քիմսէ գօրգմագ։ Ալլահտան գօրգմագ, Ալլահ վարտըր տէմէք տիր։

— Հիցֆիւմսարլարըն սիյասեֆինցէ՛ն մի։— Ալլահըն վարլըղընա տաիր հիչ պիր հիւքիւմտար թարաֆընտան պիր գարաթը հիւքիւմտարի սուտուր իթմէմիլտիր, վէ պիլ ճիւմիլէ հիւքիւմտարլարըն, քէնտի գանուշլարընը հիւքիւմաթը իլահիյէ իւզէրինէ պինայէն վագ էյլէմէլէրի, օ հիւքիւմտարան թէպաասընըն հիւքիւմաթը իլահիյէյի գապուլ իտէր օլտուզլարընա տէլալէթ էյլէր։

Պու սուրէթլէ պիլթիւն ճէմաաթլարըն Ալլահըն վարլըղընա ինանմալարը, պիզգաթ ցեհապը Ալլահըն, պիտայէթի խիլգաթտա իլք աթալարըմըզա քէնտինի պէյան իթմիլ օլմասընտան վէ եախօտ մեհզարէյի ֆեայիցաթը սէյր ու թէմաչա իթմէքտէն իլէրի կէլէպիլմիլ տիր, չիւնքի պիր սաաթ, պիր սաաթմընըն վարլըղընը իսպաթ էյլէտիյի կիպի,

քեայինաթ տա Ալլահն վարլըլընը խապթ իտէր .

Քեաթէյի պէշերիյէթին , Ալլահն մէվ-
ճուտիյէթինի գապուլ էյլէմէլէրի գարշըսն-
տա , պուշն խիլաթինը սէյլէյէն պիր գաշ
Ալլահըլըն նէ էէնմիյէթի օլապիլիր : Մա-
տամ քի ինսանլարն մալիք օլտուզլարը ի-
զանը ֆըթրի ծնլարա գարշը պուլունուեօր ,
տէմէք տիր քի արթըգ պու տալա , գազա-
նըմըշտր : Պիւթիւն ալէմէ գարշը հագգը
օլտուզընը իտտաա իտէպիլմէք իշիւն , ապ-
ընը զայիպ իթմիշ օլմագ լաղըմտր : Պիւ-
թիւն ալէմ ալտանմըշտր տէմէգաէն էվիլէ ,
պիւթիւն ալէմ հագգըմտր տէմէք իճապ ի-
տէր :

Հիքեայէ : Օլտուգճա գալապալըլըն օլան պիր ճէ-
միյէթտէ , տիրապին պիրի Ալլահն մէվճուտիյէթինէ
գարշը սէյլէմիլաի Պուճա հիշ պիր քիմէնին ճէ-
վապ վէրմէտիլինի կէօրլնճէ , — Սիլին կիպի ազլ ,
տիրապիթ ու ֆէթանէթ սահիպի քիմէլէրտէն միւ-
թէշէքիլ օլան շէյլէ պիր ճէմիյէթտէ , Ալլահն
վալըլընն ինսանլարն եալընըգ պէն օլտուզըմը գանն
էթմէյօրտուճ տէր : Պուշն իւղէրինէ էվին սա-
հիպի խանըմ , — էֆէնտի , թէէսսիֆ իթմէյինիլ ,
սիղ եալընը տէյիլսինիլ , պէնիմ աթլարմ , քէօ-
րէյիմ վէ քէտիմ տէ պու շէրէֆէ մալիք տիրէր .
անճագ սիլին իլէ ծղար արտաքնտու շու ֆարգ վար
տըր քի , ծղար սիլին կիպի պու շէրէֆէ իֆթիսար
իթմէյլէր — եօլու , գարիֆանէ պիր ճէվապաա պու-
լունուր :

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ռ Ո Ս Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Գործ Առաքելական Աթոռայ կը հրատարակէ հե-
տեւեւեալ ազդը .

«Ամառուան եղանակին պատճառաւ և բար-
ձրագոյն տրամադրութեամբ՝ Լևոն ԺԳ-ի մահուան
տարեդարձին առթիւ Յուլիս 20ի քահանայապետա-
կան մատրանական-արարողութիւնը Նոյեմբեր 5ին
պիտի փոխադրուի , իսկ Պիոս Ժ-ի թագադրութեան
համար Օգոստոս 9ին կատարուելիք մատրանական-
արարողութիւնը պիտի փոխադրուի Նոյեմբեր 16ին , որ
է օր տարեդարձի եպիսկոպոսական ձեռնադրութեան
թագաւորող Քահանայապետին :

Ս. Քահանայապետը Գոյմիոյ Հարգման
Արքեպիսկոպոսին զրկեց Պալիսո , նշան արքեպիսկոպո-
սական իշխանութեան :

Երուսաղէմի Պատրիարքը պարգեւեց նոյն նորն-
տիր Արքեպիսկոպոսին՝ Ս. Գերեզմանի կարգին մեծ
խաչը :

Մեծ ցաւով լսեցինք թէ փետր. 4ին վախ-
ճանած է Վիեննայի իշխան Արք. Կարդինալ Նակլ .
Հաղիւ տարի մըն է որ հանգուցեալը բարձրացած էր
հոգմէական Միքանույ պատուոյն . և դեռ 57 տա-
րեկան առոյգ և քաջակազմ՝ կը խոստանար բազ-
մաթիւ տարիներ ծառայութիւն մատուցանել
Ս. Եկեղեցւոյ : Սակայն անողոք հիւանդութիւնը , ե-
րկամանց քաղցկեղ , յանկարծ իւկեց զինքը իր որդ-
ւոց սէրէն : Ազնուատոհմ էր . եռանդուն եկեղեցա-
կան և բարեպաշտ հաւատացեալ : Եւ որովհետեւ
մահուան ժամանակ է որ աւելի օրինակելի կ'ըլլայ
հաւատոյ հաստատութիւնը , յուսոյ անվեհերութիւնն
ու սիրոյ կատարելութիւնը , ուստի կ'ուզենք ակնարկ
մը նետել մեծ հանգուցելոյն վերջին օրերուն վրայ :
Երբ բարեպաշտ ոգուցեալը հասկցաւ վտանգին
մօտ ըլլալը , խղրեց վերջին խորհուրդները՝ ըսելով .
«Իբրեւ եպիսկոպոս պէտք է որ թեմականներու բարի
օրինակ տամ» :

Զըբքէ Գերապայծառը՝ Սուրբ Ստեփաննոսի կա-
նոնիկոսներէն և քահանաներէն , ինչպէս նաեւ Արքե-
պիսկոպոսական կղերանոցին աշակերտներէն կազմուած
թափօրով Ս. Խորհուրդը բերաւ Մայր Եկեղեցին Վ.
հիւանդին սենեակը , ուր կը գտնուէին շատ մը ե-
պիսկոպոսներ , Վ. Կարդինալին քշըր Օրիորդ Նակլ
և իր ազգականները և ուրիշներ :

Մէրինաքի Գերապայծառը բարձրաձայն և հան-
դարտօրէն կարդաց Հաւատալը . հիւանդը անոր հետ
բառ առ բառ գուրցեց նոյն և աւարտեց՝ երգմամբ
ցոյց տալով իր հաւատքի լրութիւնը : Ապա աչքերը
ներկաներուն դարձնելով ըսաւ . «Ամէնքնիդ ալ վկայ
էք իմ հաւատքիս» : Այս խօսքերը զամէնքը ուժ-
գնակի յուզեցին : Հ. Վենման մատակարարեց վերջին
Ս. Խորհուրդները . Կարդինալը ըովանդակ արարողու-
թեան միջոցին եռանդնոտ բարեպաշտութեան մը
մտածումներով գրաւուած կեցաւ :

Երբ արարողութիւնը վերջացաւ , Մարինաքի Գե-
րապայծառը ծունկի եկաւ հիւանդին մահճին առ-
ջեւ , և խղրեց Կարդինալին եպիսկոպոսական օրհ-
նութիւնը ներկայից և բոլոր թեմին համար : Կարդի-
նալը ճիգ մը բրաւ և կէս նստած դիրք մը առնելով
սկսաւ վճիտ ձայնով շնորհակալ ըլլալ անոնց որ ե-
կած էին իրեն օժտնդակելու իրենց ներկայութեամբը
և աղօթքովը , և աւելցուց . «Եթէ մէկուն չարիք մը
ըրած եմ , ամէնէն թողութիւն կը խղրեմ» : Այս
խօսքերը կրկնապատկեցին ընդհանուր յուզումը : Յե-
տոյ արտասանեց օրհնութեան ձեւը և բարձրացուց
իր դեռ ևս անողոքաջ աչք ներկայից վրայ , որոնք
լուիկ մեջիկ դարձեալ թափօրով մեկնեցան գացին
Մայր Եկեղեցին , անցնելով առաջուրէն աւելի խուռն
բաց նոյնպէս պատկառելի և ամբոխ ընդմեծեան
մը մէջէն :

Ն. Ս. Բահանայապետը՝ Ն. Առաքելական Վե-
հափառութեան, Ծրանսուա Ժողէք կայսեր և Թա-
գաւորին ուղղեց իր սրտագին ցաւակցութիւնները
առթիւ մահուան Ն. Վ. Կ. և Թ. Աւստրիոյ Բա-
նիերի Արհիեպիսկոսին։ — Օգոստոսափառ վախճանեային
շիշտակը պիտի ապրի միշտ թէ՛ պատմութեան մէջ
և թէ՛ բոլոր կայսրութեան հպատակաց սրտերուն
մէջ, զորոնք գրաւած էր իր անդուգական ձրքերով,
Բովանդակ Աւստրիա սուգի մէջ է. նախարարք կ'ող-
բան իրենց նախագահը. բանակը՝ իր վերակազմողը. գի-
տութեանց կաճառը՝ իր պաշտպանը. կարօտեալք՝ ի-
րենց բարերարը, Հանգուցեալը հակառակ իրեն զե-
նուորական լուրջ զբաղմանց՝ Ժամանակ կը գտնէր հե-
տեւելու նաև գիտական ձեռնարկներու. և իր բարձր
վեհանքութեան շնորհիւ՝ էլ ժայռնի գերեզմանաց
մէջ գտնուած ձեռագիրներու հաւաքածոյին սեփա-
կանութիւնը ապահովուեցաւ Աւստրիոյ Անցեալ տա-
րի, Ագամանդեայ Յոբելինին առթիւ, շատ հաշա-
կուեցաւ իր համբաւը։

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Մեծաւ հաճութեամբ կը հրատարակենք հետեւեալ
գեղեցիկ նամակը զոր առ Նորին Գերեջանկութիւն
դրկած է Մարոնիներու Պատրիարք՝ Ամենայ. Տ. Հուպ-
եէք։

ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ ԱՆՏԻՈՒԱՅ

ՄԱՐՈՆԵԱՅ

Պէտրի, 26 Յնվ. 1913

Ն. Գերեջանկութիւն

Տ. ՊՈՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԵՐԶԵԱՆ

Պատրիարք Հայոց Կիլիկիոյ

Կոստանդնուպոլիս, Բերա

Ամենապատիւ Տէր,

Ամանորի շնորհաւորութիւնները, զորս Ձեր Գեր-
եջանկութիւնը ինձ ուղղելու կանխահոգ աղնուե-
թիւնը ունեցեր էր՝ մեծապէս յուզեցին զիս։ Ուստի
ընծայելով Ձեզ ջերմագին շնորհակալութեանս հա-
ւաստիքը, կը մաղթեմ բարօրութիւն՝ Ձեր Գերե-
ջանկութեան և ամբողջ Հայ-Կաթողիկէ Պատրիար-
քութեան։ Կը խնդրեմ որ հաճիք ընդունիլ այս իղ-
ձերս, որոնք այնքան աւելի անկեղծ և բոլորքուն են
արքան որ աւելի ջանադիր կը տեսնենք այժմ հա-
րութեան ոգին մոցնելու Արեւելքի մէջ մասնական
գաղափարները, որ կը ձգտին Կաթողիկէ Եկեղեցին
կազմալուծելու և աշխարհի մէջ անոր փրկարար ազ-
դեցութիւնը նուազեցնելու։

Արդարեւ անձկութեամբ հետեւեցանք ձեր պատ-
րարքական իշխանութեան դէմ ուղղուած ցաւալի

դէպքերուն ամէն յեղակարծ դարձուածներուն. և
խնդրեցինք Անկէ, որ յաղթեց աշխարհի, զօրավիգն և
պաշտպան ըլլալ Ձեզի, որպէս զի կարենաք յաղթա-
կան հանդիսանալ և Ձեր բովանդակ պատրիարքու-
թեան մէջ ամրապնդ հաստատել Կաթողիկէ սկզբ-
ունքը։

Մեր պատրիարքութեան աւանդութիւններուն
մէջ, Ամեն. Տէր, կայ հատ մը, որուն հետեւելը ին-
ծի պարտք և հաճոյք կը համարեմ. այն է նկատել
իրեւ մերը՝ Զմեառի վանքը և Լիբանանու Հայ-
Կաթողիկէները։ Մենք անոնց միշտ օգնելու ենք և զանց
պիտի չընենք օգնել ամէն անգամ որ առիթը ներ-
կայանայ։

Ձեր Գերեջանիկ Տէրութեան յանձնարարութիւ-
նը աւելի ևս կ'առաւելու մեր՝ անոնց նկատմամբ միշտ
ունեցած սիրալիր հոգածութիւնը։ Ուստի կրնան վրս-
տահ ըլլալ մեր բարեկամեաց և անձնանուէր ձեռ-
նուածութեան վրայ։

Կը խնդրեմ որ Ձեր Գերեջանկութիւնը հաճի
ընդունիլ յարգալիր նուէրը զգացումներու որոնցմով
պատիւ ունիմ ըլլալու։

Ձեր Գերեջանիկ Տէրութեան

Բոլորաճաւէր ծառայ

ԵԼԻԱ ՊԵՏՐՈՍ ՇՈՒԱՅԵԷ

Մարոնի Պատրիարք

Անտիոքի և բովանդակ Արեւելի ից

Ն. Փետր. 11ին Պոլիս եկաւ Յովհ. Եպիսկ. Նազիւնի,
վեհապետ Տրապիզոնի, իր թեմին ինչ ինչ
գործքերուն կարգադրութեան համար։

Ն. Արհ. Արքիմարտան Արքեպիսկոս ուղղուած հե-
ռագիր մը կը գուժէ մահը՝ Մարաշու Հ. Կաթողիկէ
հասարակութեան երեւելիներէն Գրիգոր Էփ. Խըադ-
եանի, որուն կը մաղթենք յաւիտեական հանգիստ և
իր պարագայից Ս. Հոգւոյն միեթարութիւնը։

Ն. Գեր. Յարութիւն Վ. Նազալեան Ուրբաթ
օրը. Փետր. 11ին, մեկնեցաւ Տ. Կերա իր հայրենիքը։

Յունաց Պատրիարք ընտրուեցաւ Տ. Եւրմանոս
Գառնգիւղի Մետրապոլիտը։

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր .

Օսմ. պետութեան և Պալատեան զինակիցներու
միջեւ պատերազմը կը շարունակուի իր ազդեալի պա-
տահականութիւններով։ Էտիրնէ քաջարար կը դի-
մանայ պաշարման։ — Օտար մարտանաւերու թիւը
հետզհետէ կ'աւելնայ։

Գերապանները ամէն ծիգ կը թափեն պուլկար
դահլիճին մօտ, որպէս զի հաշտութեան բանակցու-
թիւնները վերսկսին։ Կը հաւատարմութեւ Հազգը փա-
շայի Եւրոպա մեկնիլն այլ հաշտութեան համար է։

ՍՐՏՈՆԱՏԷՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

Տպագր. Կ. Արձագանգ Շաքարեքերի, Բերա, Պայամ փողոց թիւ 5, Կ. Պոլիս



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԿՐԱՊԵՏ

ԳԷՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

ԽՆԴՐԱՆՔ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵՆԷ

Մեծարոյ հարֆ եւ եղբարֆ

Կը ծանուցանենք մեր սրտին չերմագին բաղձանքները:
Ամէն կողմ՝ ցրուած յայտարարութեանց շնորհիւ տեղեկա-
ցած ըլլալու է յարգոյ հասարակութիւնը թէ Պոլսոյ մէջ վա-
ճառատուն մ'ալ հիմնած ենք, որով պիտի զբաղինք արտածմամբ
և ներածմամբ. և ունինք ներկայիս բաւական պատրաստ ապ-
րանք, իւղ և չոր պտուղ:

Ամենամեծ նպատակնիս է գոհացում առաւ մեր գաւառի
յարգոյ յաճախորդներուն և այսպէսով ստեղծել մեր շուրջը չըր-
ջանակ մը սրտերու, որոնք կրնան իրարու օգնելով ապրիլ իբրեւ
քրիստոնեայ եղբայրներ. փորձը պիտի ցույնէ ձեզ մեր պայ-
մաններուն առաւելութիւնները:

Գործ ընել կը փափաքինք կարգ մը կարեւոր քաղաքներու
հետ և այս նպատակաւ յայտարարութիւններ ղրկած ենք անոնց,
որոնց պատասխանին կը սպասենք:

Մեզ որ եւ է կերպով աջակցողներուն խորին շնորհակալու-
թիւննիս կը յայտնենք և կը մնանք միշտ երախտապարտ,

Եղբայրասէր Ընկերութիւն
Ք Է Օ Յ Թ Է Ր Ե Ա Ն Ե Ղ Բ Ա Ր Ց

Կ. Պոլսոյ սնօրինութիւն
ԹԱՐՈՒԹԻՒՆ ՍԷՄԷՐՃԵԱՆ

1913 Յունվար 25

Մահմուտ Փաշա Մեծ Երթըզ խան
Թիւ 14, Կ. Պոլիս

Քարոզ Յիսուսի չարչարանաց վրայ	97
Տէր Կովսէաս Բահանայ	99
Դիտումնաւոր եռանդ	102
Ազիզլիյին Բիւշիւ պիւ շիշէյի	106
Եօթնեակ Քրիստոնէի	107
Հաղորդակցութիւն յաստածայինս	108
Ռուսաստանի Հայ-Կաթողիկէութիւնը	109
Գաթօլիք Մէզգիայի Լաւարաք	110
Տեղեկագրական	111

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիոյ համար, տարեկան՝ 40 դիկ. արծ. վեցամսեայ՝ 20.—
մէկ թիւ՝ 1 դիկ.:— Արամասիման՝ տար. ժր. 10. վեցամս. 5.—Վհարմուսի կանխիկ են:
ՀԱՍՅԵ.—Կարողիկ Արձազանդ, Բերա, 5 Պայթման փողոց 5, Կ. Պոլիս:
ՀԱՏԻՍԿԱՅԻՆ.—Կարողիկ Արձազանդ, Բերա, 5 Պայթման փողոց 5, Կ. Պոլիս:

Péra, 5 Rue Baïram 5

ԻՍԼԱՄԻԱՆԻՆԻ Բ. — 1. — Արհեստագործ կը ն
լորեալ չէ անպատճառ կամ նոյնութամբ նրասար
յօղումներու հեղինակը կը պարտ իր խնկակա
դարձուի: 5. — Յօդուածներու ձեռագրները պ
մանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը
ժեշտ երկու դանկակնի նամակադրովք ի միւսին պէ

ՏՊԱՐՍԵ, Կարողիկէ Խճագանգի Բեր, 5 Յոյն Ժ. 5: Տպարանս՝ ըստ ամենայնի նոյն է ի վիճակի է որ եւ իցէ սպազրական զորոց համար: Կը սպառն իմ ինչ ըստ ծանուցմանց, զիրեք, ճեռներ, հրա իրագիրներ, Բարդեր, Բարդ-արեւունէր, մահաղներ, եւն: Եւն: Գործերը **անմեղիկ** կերպով սձան են: Գեղեցկագիսական նա- շակի եւ սպազրական մահուքեան կողմանէ, ընտելացները անսարակոյա զոն պիտի մնան:

Կը խնդրուի պատուսման բաժանորդներէն, որոնց բաժանորդագրութիւնը կը վէճակուի 10ին, որ փութան նորոգել իրենց բաժանորդութիւնը, եթէ չեն ուզեր որ իրենց թերթի առաքումը յապաղման ենթարկուի: Իսկ ամիսէ մը պիտի դադրեցնենք թերթ առնելու անոնց որ մինչեւ ցայնժամ բաժանորդագրուած չպիտի ըլլան: